ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՌՈՒԲԻՆԱ ՎԱՐԴԱՆԻ

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԵՎ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

ԺԲ.00.03 Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային,սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

РУБИНА ВАРДАНОВНА ПЕТРОСЯН

ОСУЩЕСТВЛЕНИЕ ЛИЧНЫХ НЕИМУЩЕСТВЕННЫХ И ИМУЩЕСТВЕННЫХ ПРАВ ДЕТЕЙ, ОСТАВШИХСЯ БЕЗ ПОПЕЧЕНИЯ РОДИТЕЛЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – Частное право: гражданское право; торговое (коммерческое) право; международное частное право; семейное право; трудовое право; право социального обеспечения.

ЕРЕВАН-2021

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Վահրամ Դավիթի Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Մերուժանի Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Դավիթ Մարատի Սերոբյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թ. դեկտեմբերի 24-ին, ժամը 16^{00}-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թ. նոյեմբերի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
իրավ. գիտ. թեկ., դոցենտ **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, профессор
Ваграм Давидович Аветисян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор
Армен Меружанович Айкянц
кандидат юрид. наук, доцент
Давид Маратович Серобян

Ведущая организация: **Российско-Армянский университет**

Защита состоится 24-ого декабря 2021 г. в 16^{00} часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 11-ого ноября 2021 года.

Ученный секретарь специализированного совета:
кандидат юридических наук, доцент **Т. О. Суджян**

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: 21-րդ դարում տեղի ունեցած համակարգային փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունեցել նաև ընտանեկան, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների (այսուհետ՝ նաև ԱԾԽՄԵ) խնամքի և դաստիարակության կազմակերպման, նրանց իրավունքների իրացման վրա: Դա պայմանավորված է նրանով, որ ներկայումս էականորեն փոխվել են երեխայի իրավական կարգավիճակը, երեխայի և նրա խնամքի ու դաստիարակության համար պատասխանատու սուբյեկտների միջև իրավահարաբերությունների բնույթն ու բովանդակությունը:

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» վերտառությամբ 2-րդ գլխում ամրագրվեց, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաները պետության հոգածության և պաշտպանության ներքո են (37-րդ հոդվ., 4-րդ մաս): Սրանով իսկ ընդգծվեց ԱԾԽՄԵ-ի նկատմամբ պետության առանձնահատուկ մոտեցումն ու այդ ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունը:

2017 թվականին ՀՀ ընտանեկան օրենսգրքում (այսուհետ նաև՝ Ընտանեկան օրենսգրիք) լայնածավալ և առանցքային փոփոխություններ կատարվեցին հատկապես առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վերաբերող 6-րդ բաժնում: Մասնավորապես, ինստիտուցիոնալ փոփոխություններ են կատարվել խնամատար ընտանիքին վերաբերող 20-րդ գլխում: Նախատեսվել են խնամատար ընտանիքի տեսակները և երեխային խնամատարության հանձնելու հիմքերը և տևողությունը, հստակեցվել են խնամատար ընտանիքին ներկայացվող պահանջները, ընդլայնվել են խնամատարության պայմանագրում նախատեսվող պայմանները և այլն: Միևնույն ժամանակ, դրան համահունչ որևէ էական փոփոխություն չի կատարվել «Խնամակալությունը և հոգաբարձությունը երեխաների նկատմամբ» վերտառությամբ 19-րդ գլխում, մինչդեռ այդ ինստիտուտը ևս կատարելագործման կարիք ունի: Այս համատեքստում առաջնային և արդիական է համապարփակ ուսումնասիրել ԱԾԽՄԵ-ի խնամքի և դաստիարակության պատշաճ ապահովման (մասնավորապես՝ խնամակալության և հոգաբարձության ու խնամատար ընտանիքի ինստիտուտների միջոցով) վերաբերյալ գործող իրավակարգավորումները և դրանց պրակտիկ կիրառման հիմնախնդիրները և լուծումներ առաջարկել: Ատենախոսությանն առաջադրված ծավալային սահմանափակումները հաշվի առնելով՝ դրանում անդրադարձել ենք առանց ծնողական խնամքի մնացած ու խնամակալության և հոգաբարձության (այսուհետ՝ նաև խնամակալություն (հոգաբարձություն)) և խնամատարության ներքո գտնվող երեխաների անձնական ոչ գույ-

քային և գույքային իրավունքների իրականացման հետ կապված հիմնահարցերին:

Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ ներկայումս գործող խնամատար ընտանիքի մոդելը, կախված երեխայի ֆիզիկական և հոգեկան առանձնահատկություններից, նախատեսում է խնամատար ընտանիքների տեսակներ և խնամատարության իրականացման տարբերակված ժամկետներ՝ ի տարբերություն անհատույց իրականացվող խնամակալության (հոգաբարձության), խնամատար ընտանիքի դեպքում ամսական ժամանակահատվածով վճարվում են դրամական միջոցներ, այդուհանդերձ խնամակալության (հոգաբարձության) ինստիտուտի համեմատությամբ ունի նվազ կիրառություն: Սա փաստվում է նաև առկա վիճակագրությամբ: Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված պաշտոնական տվյալների համաձայն՝ 2015-2020 թթ. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թիվը կազմել է 913 երեխա: Նրանցից 306-ը որդեգրվել են, 273-ը՝ հաձնվել խնամակալության (հոգաբարձության), 47-ը գտնվում են խնամատար ընտանիքներում, որոնցից 7-ը՝ մասնագիտացված խնամատար ընտանիքներում, շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող երեխաների թիվը 603 է: Խնամատար ծնող է հաշվառվել 32 անձ: Այս ամենը առաջ է բերում խնամքի և դաստիարակության ընտանեկան ձևերի գործնական կիրառության հետ կապված խնդիրների ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Մի կողմից սահմանադրի, օրենսդրի կողմից ԱԾԽՄԵ-ին՝ որպես պաշտպանության հատուկ սուբյեկտի առանձնացումը, օրենսդրական մակարդակում նրա խնամքի և դաստիարակության կազմակերպման ձևերի նախատեսումը, մյուս կողմից՝ բացահայտման, կարգավիճակի ճանաչման, խնամքի և դաստիարակության հանձնման և հետագա խնամքի ու դաստիարակության նկատմամբ վերահսկողության իրականացման պատվիրակումը ոչ մասնագիտացված՝ անհրաժեշտ մասնագիտական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներ չունեցող խնամակալության և հոգաբարձության մարմնին (այսուհետ՝ խնամակալության մարմին) պահանջում է տեսական, գործնական և իրավահամեմատական խոր վերլուծություն: Պետք է արձանագրել, որ ԱԾԽՄԵ-ի, որպես պաշտպանության հատուկ սուբյեկտի իրավունքների ժամանակին և արդյունավետ պաշտպանության երաշխավորման, պաշտպանության այս կամ այն եղանակի կիրառման, դրա իրականացման համար պատասխանատու սուբյեկտների և մարմինների իրավունքների ու պարտականությունների տեսանկյունից խնդրահարույց ու հակասական է գործող օրենսդրությունը (մասնավորապես՝ Ընտանեկան օրենսգիրքը), իսկ այս առթիվ ձևավորված դատական պրակտիկա գրեթե բացակայում է: Սա ևս մեկ անգամ վկայում է սույն հետազոտության կարևորությունը՝ վերաբերելի օրենսդրության բացերի և թերությունների վերհանման և դրանց

կատարելագործման ուղղությամբ առաջարկներ ներկայացնելու անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը խնամակալության (հոգաբարձության) ու խնամատարության ներքո գտնվող ԱԾԽՄԵ-ի անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացման տեսական և գործնական հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը և դրանց հետագա կատարելագործմանն ուղղված առաջարկներ ներկայացնելն է: Այդ նպատակի իրագործումը պահանջում է հետևյալ խնդիրների լուծումը՝

- ուսումնասիրել ԱԾԽՄԵ-ի իրավական կարգավիճակի առաջացման հիմքերը, բնորոշ հատկանիշները, բովանդակությունը, դրանով պայմանավորված խնամքի և դաստիարակության կազմակերպման առանձնահատկությունները,
- բացահայտել խնամակալության (հոգաբարձության), խնամատար ընտանիքի՝ որպես ԱԾԽՄԵ-ի խնամքի և դաստիարակության կազմակերպման ինստիտուտների էությունը և վերլուծել դրանց առանձնահատկությունները,
- ներկայացնել և վերլուծել խնամարկյալի, հոգեզավակի անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների ընդհանուր կազմը, բովանդակությունը, իրացման առանձնահատկություններն ու հնարավոր խոչընդոտները դրանք իրացնելիս,
- ուսումնասիրել և վեր հանել խնամարկյալի, հոգեզավակի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, ծնողների և այլ ազգականների հետ շփվելու, սեփական կարծիքն արտահայտելու իրավունքների վերաբերյալ գործող օրենսդրության բացերը և դրանց հաղթահարման հնարավոր ուղիները,
- ներկայացնել և վերլուծել խնամարկյալի, հոգեզավակի իրավունքների պաշտպանության գործող համակարգը, խնամակալի, խնամատար ծնողի՝ ԱԾԽՄԵ-ի խնամքի, դաստիարակության և այլ պարտականությունների կատարման նկատմամբ իրավասու սուբյեկտների կողմից իրականացվող վերահսկողության մեխանիզմները, առաջարկել դրանց արդյունավետ իրականացման նոր կառուցակարգեր,
- ներկայացնել և վերլուծել խնամարկյալի, հոգեզավակի գույքային իրավունքների բովանդակությունը, իրացման առանձնահատկությունները, դրանց իրացման ճանապարհին առաջացող հնարավոր խոչընդոտները,
- ուսումնասիրել և վեր հանել խնամարկյալի, հոգեզավակի բնակելի տարածության իրավունքի իրացման առանձնահատկությունները, կարգը, գործող իրավակարգավորումներում առկա բացերը և դրանց հաղթահարման հնարավոր ուղիները,

▪ բացահայտել խնամակալի և խնամարկյալի միջև ալիմենտային իրավահարաբերությունների էությունը, առաջացման հիմքերը և պայմանները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն են առանց ծնողական խնամքի մնացած երեխայի՝ խնամակալության և հոգաբարձության ու խնամատարության հանձնումից հետո առաջացող անձնական ոչ գույքային և գույքային հարաբերությունները, իսկ առարկան՝ խնամարկյալի, հոգեզավակի անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացումը, պաշտպանությունը և դրանց իրավական կարգավորման հիմնախնդիրները:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը:

Հայրենական իրավագետների կողմից առանց ծնողական խնամքի մնացած և խնամակալության (հոգաբարձության) ու խնամատարության ներքո գտնվող երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացման ինստիտուտը, առկա տեսական և գործնական հիմնախնդիրները առանձին ուսումնասիրության առարկա չեն դարձել և համակողմանի վերլուծության չեն ենթարկվել: Թե՛ հայրենական, թե՛ ռուսական իրավագիտության մեջ ԱԾԽՄԵ-ի խնամքի և դաստիարակության կազմակերպմանն ուղղված նշված երկու ինստիտուտներին զուգադրական քննության տեսքով անդրադարձ չի կատարվել, չեն ուսումնասիրվել այս կապակցությամբ միջազգային իրավական զարգացման հիմնական միտումները, առկա հիմնախնդիրները վերլուծության չեն ենթարկվել ներպետական և միջազգային իրավական կարգավորման տեսանկյունից:

Հայրենական ընտանեկան իրավունքի մասնագետները տարբեր աշխատություններում անդրադարձել են երեխաների իրավունքներին վերաբերող խնդիրներին, սակայն այս թեմայով համապարփակ ուսումնասիրություն չի կատարվել: Երեխաների մասնակցությամբ առաջացող իրավահարաբերությունների այս կամ այն ասպեկտները լուսաբանվել են այնպիսի գիտնականների աշխատություններում, ինչպիսիք են Ռ. Ավագյանը, Ս. Հ. Հովհաննիսյանը, Գ. Հ. Ղարախանյանը, Ա. Մ. Հայկյանցը, Տ. Ա. Դավթյանը:

Հետազոտության տեսական հիմք են կազմել ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան տարբեր հեղինակների աշխատություններ, այդ թվում՝ Գ. Հ. Ղարախանյանի, Տ. Կ. Բարսեղյանի, Ա. Մ. Հայկյանցի, Տ. Ա. Դավթյանի, Մ. Վ. Անտոկոլսկայայի, Ե. Մ. Վորոժեյկինի, Ն. Մ. Երշովայի, Լ.Գ. Կուզնեցովայի, Յա. Ն. Շևչենկոյի, Մ. Ն. Մալեինայի, Ա. Մ. Նեչաևայի, Ա. Ի. Պերգամենտի, Լ.Մ. Պչելինցևայի, Ե. Ա. Սոփանովի, Վ. Ա. Ռյասենցևի, Գ. Ֆ. Շերշենևիչի, Ա. Ն. Չաշինի, Ե. Ա. Չեֆրանովայի., Բ. Ա. Էթվուդի, Ջ. Վ. Գուլդի, Դ. Ա. Մարտինդեյլի, Ք. Հ. Ֆեդերլի, Դ. Գադոմսկիի, Պ.

Պարկինսոնի, Ժ. Քեշմորի և բազմաթիվ այլ հեղինակների աշխատություններ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության նորմատիվ հիմքն են կազմել ՀՀ Սահմանադրությունը, Ընտանեկան օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ Քաղաքացիական օրենսգիրք), «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը և այլ իրավական ակտեր, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ վճռաբեկ դատարանի դատական ակտերը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալները, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի Հանրապետության, Ֆինլանդիայի Հանրապետության, Շվեդիայի, Իսրայելի և այլ երկրների՝ ոլորտը կարգավորող իրավական ակտերը և դատական պրակտիկան:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Հետազոտությամբ առաջադրված նպատակներին և խնդիրներին հասնելու համար կիրառվել են թե՛ համագիտական, թե՛ մասնավոր գիտական մեթոդները: Մասնավորապես, հետազոտության մեթոդոլոգիական հիմքը հանդիսացել են ինչպես ընդհանուր գիտական նշանակություն ունեցող մեթոդները՝ ինդուկցիա, դեդուկցիա, անալիզ, սինթեզ և այլն, այնպես էլ մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, համակարգակառուցվածքային, վիճակագրական և այլ մեթոդները: Աշխատանքում լայնորեն կիրառվել է համեմատական-իրավական մեթոդը:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը նրանում է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համակողմանի ուսումնասիրության և վերլուծության առարկա են դառնում խնամակալության (հոգաբարձության) ու խնամատարության ներքո գտնվող ԱԾԽՄԵ-ի անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացման տեսական և գործնական հիմնախնդիրները: Տեսության մեջ արտահայտված կարծիքների, ՀՀ օրենսդրության, միջազգային իրավական կարգավորումների, արտասահմանյան երկրների օրենսդրության, դատական պրակտիկայի համակարգային վերլուծության հիման վրա առաջին անգամ գիտական մակարդակով քննարկման առարկա է դառնում և համակողմանի վերլուծվում ԱԾԽՄԵ-ի իրավական կարգավիճակի ճանաչման, խնամակալության (հոգաբարձության) ու խնամատար ընտանիքի ինստիտուտների ընդհանրությունների ու տարբերությունների, խնամակալության (հոգաբարձության) ու խնամատարության հանձնված երեխաների առհասարակ անձնական ոչ գույքային բոլոր իրավունքների և առանձին (սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու, ծնողների և այլ ազգականների հետ շփվելու) իրավունքների իրացման առանձնահատկությունները, գույքային ի-

րավունքների պատշաճ իրացման հարցում խնամակալի և հոգաբարձուի (այսուհետ նաև՝ խնամակալ (հոգաբարձու)), խնամատար ծնողի և խնամակալության մարմնի պարտականությունները, խնամարկյալի, հոգեզավակի իրավունքների պաշտպանության եղանակների ընտրության առանձնահատկությունները և այլ հիմնախնդիրները: Նշվածի արդյունքում կատարվել են ինչպես տեսական եզրահանգումներ, այնպես էլ օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ կատարված տեսական ընդհանրացումներում և գիտագործնական բնույթի առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Իրավաբանական գրականության մեջ քննարկվող և Ընտանեկան օրենսգրքում ճգնաժամային խնամատարության դեպքում նախատեսված, իսկ խնամակալության առթիվ առկա վիճակագրությամբ փաստվող «ազգակցական դաստիարակության նախապատվության» առնչությամբ առկա դոկտրինալ մոտեցումների, միջազգային փորձի, ընտանեկան օրենսդրությունում համընդհանուր ճանաչում գտած իրավական սկզբունքի աստիճանի բարձրացված «երեխայի լավագույն շահի» հաշվառմամբ և ՀՀ-ում առկա փաստական վիճակի համադրմամբ հիմնավորել ենք, որ օրենսդրի կողմից միայն խնամատար ընտանիքի և այն էլ միայն ճգնաժամային խնամատարության դեպքում «ազգակցական դաստիարակությանը նախապատվություն» վերապահելը բոլոր դեպքերում չի կարող բխել «երեխայի լավագույն շահերից»: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից այն բնորոշվել է դինամիկ, բարդ, ընդգրկուն հասկացություն, որը հնարավոր չէ վերացականորեն և օբյեկտիվ կերպով սահմանել և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վեր է հանվում կոնկրետ իրավիճակի, հանգամանքների և երեխայի կարիքների հաշվառմամբ: Հիմնավորվել է, որ երեխայի խնամքն ու դաստիարակությունը ստանձնելու ցանկություն հայտնած բոլոր անձինք պետք է հայտնվեն համապատասխանության գնահատման հավասար պայմաններում ինչպես ճգնաժամային խնամատարության, այնպես էլ առհասարակ խնամատար ծնող կամ խնամակալ (հոգաբարձու) դառնալու դեպքերում, որը պահանջում է նաև համապատասխան օրենսդրական ամրագրում:

2. Հաշվի առնելով ներկայումս ընտանեկան իրավահարաբերություններում երեխայի ունեցած բավականին ակտիվ դերակատարումը, ելակետ ընդունելով Սահմանադրության 37-րդ և Ընտանեկան օրենսգրքի 44-րդ հոդվածներում ամրագրված՝ երեխայի սեփական կարծիքն արտահայտելու հիմնարար իրավունքի և վերջինիս 10 տարին լրանալիս այն «օրենքով նախա-

տեսված լինելու դեպքերում» պարտադիր հաշվի առնելու համապատասխան անձանց և մարմինների պարտականությունը՝ ատենախոսությամբ հիմնավորվել է, որ երեխայի յուրաքանչյուր իրավունքի առանցքը կազմող, դրանց իրացման երաշխիքների կառուցակարգը կանխորոշող «երեխայի լավագույն շահը» պահանջում է երեխայի կարծիքը հաշվի առնել նաև նրան խնամակալության (հոգաբարձության), խնամատարության հանձնելու դեպքերում: Առաջարկում ենք Ընտանեկան օրենսգրքում ամրագրել խնամակալության (հոգաբարձության), խնամատարության հանձնելու դեպքերում իրավասու մարմնի՝ տասը տարին լրացած երեխայի կարծիքը հաշվի առնելուն վերաբերող դրույթներ: Այս առաջարկը հիմնավորվում է միջազգային փորձի և դատական պրակտիայի ուսումնասիրությամբ և վերլուծությամբ:

3. ՀՀ օրենսդրության վերլուծությունը վկայում է ԱԾԽՄԵ-ի իրավունքների իրացման, պաշտպանության հարցերում խնամակալության մարմիններին վերապահված պարտականությունների և առանցքային գործառույթի մասին: Միևնույն ժամանակ անհրաժեշտ մարդկային, ֆինանսական, տեխնիկական ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված՝ խնամակալության մարմինների գործունեությունը ոչ հազվադեպ ձևական և թույլ բնույթ է կրում: Նշված խնդիրների հաղթահարման, ԱԾԽՄԵ-ի պաշտպանության գործող եռաստիճան համակարգի (առաջին օղակ՝ խնամակալության մարմին, երկրորդ օղակ՝ մարզպետարան (քաղաքապետարան), երրորդ օղակ՝ լիազոր մարմին) վերազինման և հատկապես առաջնային օղակում՝ մասնագիտացված խնամակալության մարմնի ստեղծման նպատակով առաջարկում ենք երկու փուլով իրականացվող գործողությունների շղթա, որի արդյունքում կմշակվի և կկենսագործվի ԱԾԽՄԵ-ի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ իրավական, օրենսդրական հենքը, կներդրվեն իրավասու մարմինների կողմից ԱԾԽՄԵ-ի իրավունքների իրականացման նկատմամբ հսկողության և վերահսկողության իրականացման արդունավետ գործիքակազմերը:

4. Քաղաքացիական օրենսգրքի որոշ դրույթներ՝ խնամարկյալի, հոգեզավակի գույքային իրավունքների պաշտպանության տեսանկյունից խնդրահարույց են, այդ հարցում առանցքային դերակատար, հստակ պարտականություններ ունեցող խնամակալության մարմինը՝ դուրս մղված: Վերլուծությամբ հիմնավորվել է, որ խնամարկյալի գույքային իրավունքների պաշտպանության նպատակով խնամարկյալի գույքի տնօրինման, ինչպես նաև խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարք կամ ցանկացած գործարք, որը փաստացի հանգեցնում է խնամարկյալի գույքային դրության վատթարացմանը, չի կարող կնքվել առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվության, բացի այդ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի կողմից առանց իր ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության կնքած գործարքը վիճարկելու

հնարավորություն պետք է վերապահել խնամակալության մարմնին՝ այդպիսով կանխելով խնամարկյալի գույքային իրավունքների խախտումը նաև հոգաբարձուի կողմից, երբ վերջինս առանց իր համաձայնության կնքված գործարքի անվավերության պահանջ չներկայացնի: Խնամակալության մարմնին գործուն երաշխիքներով ապահովումը պահանջում է առանց վերջինիս թույլտվության կնքված՝ խնամարկյալի գույքի տնօրինմանը, ինչպես նաև խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող կամ փաստացի խնամարկյալի գույքային դրությունը վատթարացնող ցանկացած վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման և դրա անվավերության հետևանքների կիրառման պահանջի ներկայացման պարտավորության ամրագրում, բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագիրը կնքվել է ի շահ խնամարկյալի:

5. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնակելի տարածությամբ ապահովելու հարցում գործնականում արձանագրված խնդիրների, այդ առնչությամբ առկա ոչ գոհացուցիչ վիճակագրության, դրանց լուծման ճանապարհին պետության համար առաջացող դժվարությունների հաշվառմամբ և օրենսդրության, միջազգային փորձի և օտարերկրյա դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում առաջարկում ենք կառուցակարգի մշակում և կենսագործում, որտեղ օրենքի մակարդակում, ըստ անապահովության աստիճանի, 18 տարին լրանալիս, անկախ ԱԾԽՄԵ-ի նկատմամբ ընտրված խնամքի և դաստիարակության ձևից, կամրագրվի բնակարան տրամադրելու առաջնահերթությունը (դեռևս իրավական ակտերի որևէ մակարդակում ամրագրված չէ)՝ բացառելով ներկայումս ամրագրված՝ երեխայի նկատմամբ ընտրված խնամքի և դաստիարարկության ձևով պայմանավորված (մինչ այժմ բնակելի տարածությունները հատկացվել են միայն մանկատան շրջանավարտներին և չեն տրամադրվել սեփականության իրավունքով) գործող առաջնահերթությունները:

6. Փաստական դաստիարակության և ԱԾԽՄԵ-ի նկատմամբ իրականացվող խնամակալության (հոգաբարձության) ինստիտուտների իրավահամեմատական վերլուծությամբ փաստվել է, որ այս երկու ինստիտուտների միջև ըստ էության չկան տարբերություններ: Մինչդեռ, ի տարբերություն փաստացի խնամողի, խնամակալը (հոգաբարձուն) իրենց նախկին խնամարկյալից ալիմենտի պահանջի իրավունք չունեն, ինչը անհատույց իրականացվող խնամակալության (հոգաբարձության) դեպքում արդարացված չէ: Ուստի, առաջարկում ենք՝ անաշխատունակ անապահով խնամակալին (հոգաբարձուին), փաստացի խնամողի համանմանությամբ, տրամադրել դատական կարգով իրենց չափահաս գործունակ, աշխատունակ նախկին խնամարկյալից ապրուստի միջոց պահանջելու իրավունք, եթե նրանք չեն կարող ապրուստի միջոց ստանալ իրենց չափահաս աշխատունակ զավակներից կամ ամուսնուց (նախկին ամուսնուց)՝ երկու ինստիտուտ-

ների դեպքում էլ առանցքային դարձնելով անաշխատունակության առաջացման պատճառը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը նրանում է, որ ատենախոսությունում առկա վերլուծությունները, եզրահանգումները, գործնական առաջարկները կարևոր նշանակություն կարող են ունենալ ընտանեկան և քաղաքացիական իրավունքի գիտության զարգացման համար: Ատենախոսությունը կարող է օգտագործվել ինչպես քաղաքացիագետների, այնպես էլ թեմայով հետաքրքրված իրավունքի այլ ճյուղերի մասնագետների, պրակտիկ աշխատողների կողմից: Ատենախոսությունում առկա առաջարկները, վերլուծությունները կարող են օգտագործվել իրավաստեղծ գործունեության ոլորտում օրենսդրության բացերը, թերություններն ու հակասությունները վերացնելու համար, կարող են դրական ազդել նաև իրավակիրառ ճիշտ պրակտիկա ձևավորելու վրա:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք հրապարակվել են գիտական ամսագրերում և ժողովածուներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների շրջանակներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ամփոփված տասը պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և դրա կառուցվածքը:

Առաջին գլուխը՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավական կարգավիճակի ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ, բաղկացած է երկու պարագրաֆներից:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավական կարգավիճակը» վերտառությամբ 1.1. պարագրաֆում ուսումնասիրվել են առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային իրավունքների իրականացումն ապահովող ինստիտուտների պատմական զարգացման առանձնահատկությունները, «կյանքի դժվարին ի-

ռավիճակում հայտնված երեխա», «որբ երեխա» և «սոցիալական որբություն» հասկացությունները»՝ վեր հանելով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բնութագրական հատկանիշները:

Խնամակալության և հոգաբարձության, խնամատար ընտանիքի իրավական էությունը վերտառությամբ 1.2. պարագրաֆում ուսումնասիրվել են խնամակալության և հոգաբարձության ու խնամատար ընտանիքի իրավական էությունը, բացահայտվել է դրանց հիմնական առաքելությունը: Խնամակալության (հոգաբարձության) սահմանման, խնամատար ընտանիքում երեխայի խնամքի ու դաստիարակության կազմակերպման, իրականացման և դադարեցման հետ կապված հարաբերությունների իրավահամեմատական ուսումնասիրությամբ վեր են հանվել գործող իրավակարգավորումներում առկա բացերն ու խնդիրները և առաջարկվել դրանց հաղթահարման ուղիները:

Երկրորդ գլուխը՝ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային իրավունքների իրականացումը» վերտառությամբ, բաղկացած է հինգ պարագրաֆներից:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային իրավունքների ընդհանուր բնութագիրը» վերտառությամբ 2.1. պարագրաֆում վեր են հանվել հատկապես ԱԾԽՄԵ-ին վերապահված անձնական ոչ գույքային իրավունքներին բնորոշ առանձնահատկությունները, ներկայացվել է առանց ծնողական խնամքի մնացած և խնամակալության (հոգաբարձության) ու խնամատարության ներքո գտնվող երեխաների անձնական ոչ գույքային իրավունքների իրավական բնորոշումը:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքը» վերտառությամբ 2.2. պարագրաֆում բացահայտվել է խնամարկյալի, հոգեզավակի՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի բովանդակությունը: Քննարկվել են երեխայի՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի բաղադրիչ հանդիսացող խնամակալի (հոգաբարձուի), խնամատար ծնողի՝ խնամարկյալի, հոգեզավակի հետ համատեղ ապրելու, խնամարկյալի, հոգեզավակի կրթության իրավունքի ապահովման հարցերը: Վերլուծվել է իրավաբանական գրականության մեջ քննարկվող և Ընտանեկան օրենսգրքում ճգնաժամային խնամատարության դեպքում ամրագրված «ազգակցական դաստիարակության նախապատվության» հարցը, ներկայացվել է այս առթիվ այլ երկրների օրենսդրությամբ նախատեսված մոտեցումները, առաջարկվել է ՀՀ օրենսդրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ծնողների և այլ ազգականների հետ շփվելու իրավունքը» վերտառությամբ 2.3. պարագրաֆում ներկայացվել է խնամարկյալների, հոգեզավակների՝ ծնողների և այլ

ազգականների հետ շփվելու իրավունքի բովանդակությունը և հիմնավորվել այս իրավունքի պատշաճ իրացման նշանակությունը Ընտանեկան օրենսգրքում ամրագրված ԱԾԽՄԵ-ի՝ կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորման հարցում:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը» վերտառությամբ 2.4. պարագրաֆում բացահայտվել է խնամարկյալների, հոգեզավակների՝ սեփական կարծիքն արտահայտելու իրավունքի նշանակությունը նրա իրավունքների պատշաճ իրացման հարցերում և առաջարկվել է տասը տարեկան երեխայի կարծիքը հաշվի առնել նաև նրան խնամակալության (հոգաբարձության), խնամատարության հանձնելու դեպքերում:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությունը» վերտառությամբ 2.5. պարագրաֆում անդրադարձ է կատարվել պաշտպանության ձևերին, եղանակներին, ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության գործող կառուցակարգին և ներկայացվել դրա կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Երրորդ գլուխը՝ **«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների գույքային իրավունքների իրականացումը»** վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների գույքային իրավունքների էությունն ու բովանդակությունը» վերտառությամբ 3.1. պարագրաֆում հետազոտվել են խնամարկյալի, հոգեզավակի գույքային իրավունքների բովանդակությունը, նրանց պատկանող գույքի առնչությամբ գործարքներ կնքելու առանձնահատկությունները:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակելի տարածության իրավունքը» վերտառությամբ 3.2. պարագրաֆում ուսումնասիրվել են ԱԾԽՄԵ-ին բնակելի տարածությամբ ապահովելու գործող իրավակարգավորումները, սահմանված հերթականությունները, վեր հանվել իրավական կարգավորման բացերը և ներկայացվել օրենսդրական փոփոխությունների առաջարկներ:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների մասնակցությամբ առաջացող ալիմենտային իրավահարաբերությունների որոշ հարցեր» վերտառությամբ 3.3. պարագրաֆում անդրադարձ է կատարվել իրավաբանական գրականության մեջ քննարկվող խնամակալի (հոգաբարձուի) և խնամարկյալի միջև ալիմենտային իրավահարաբերությունների առաջացման հարցին համեմատականներ անցկացնելով փաստացի խնամող-երեխա ալիմենտային իրավահարաբերությունների հետ:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացվել են հետևյալ հիմնական առաջարկությունները և եզրահանգումները.

1. Մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների, գործող օրենսդրական կարգավորումների զուգադրական քննության, օտարերկրյա օրենսդրությունների ուսումնասիրության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխային բնութագրական են հետևյալ հատկանիշները՝ ծնողական խնամքից և հոգատարությունից զրկվելը՝ տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների հետևանքով, իրավասու մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով երեխայի՝ ծնողական խնամքից զրկված լինելու փաստի հաստատում, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սկզբնական, այդուհետև՝ կենտրոնացված հաշվառում օրենսդրությամբ սահմանված կարգով, խնամքի և դաստիարակության անհատական և ոչ անհատական, ժամանակավոր և մշտական ձևերի կիրառում:

2. Խնամակալության (հոգաբարձության) ու խնամատար ընտանիքի իրավահամեմատական վերլուծության, այդ առթիվ կատարված միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում կատարել ենք հետևյալ եզրահանգումները.

- «Երեխայի լավագույն շահերին» հակասող հնարավոր որոշումների կայացումը բացառելու, երեխայի խնամքը և դաստիարակությունը առավել նպաստավոր միջավայրում կազմակերպելու տեսանկյունից հրամայական է խնամակալության և հոգաբարձության մասնագիտացված մարմնի ստեղծումը:
- Խնամակալության և հոգաբարձության մարմնի համար ամրագրել խնամակալի (հոգաբարձուի) ընտրություն կատարելու, վերջինիս անձնային հատկանիշներին, ընտանեկան և գույքային դրությանը վերաբերող հստակ պահանջներ՝ այդպիսով բացառելով միայն ազգակցության փաստով առաջնորդվելու՝ ներկայումս որդեգրված մոտեցումը:
- Ընտանեկան օրենսգրքում խնամատարության համանմանությամբ նախատեսել խնամակալության (հոգաբարձության) հանձնված երեխայի խնամքի և դաստիարակության համար նախատեսված դրամական միջոցների տրամադրման հնարավորություն՝ ապահովելով խնամքի և դաստիարակության առավել բարենպաստ պայմաններ: Միևնույն ժամանակ, «Պետական նպաստների մասին» օրենքում նախատեսել «հոգաբարձության նպաստ»՝ այսպիսով իրենց պարտականությունների կատարման դիմաց հավասար փոխհատուցում ստանալու հնարավորություն ընձեռելով նաև խնամքի և դաստիարակության միևնույն գործառույթներն իրականացնող հոգաբարձուներին, որը կարևոր է նաև խնամակալության (հոգաբարձության) ինստիտուտի հաշվետվողականության սկզբունքի ապահովման առումով:

3. Հիմք ընդունելով առհասարակ անձնական ոչ գույքային իրավունքներին բնորոշ հատկանիշները և ելնելով հատկապես խնամակալության (հոգաբարձության) ու խնամատարության ներքո գտնվող երեխաների անձնական ոչ գույքային իրավունքներին բնութագրական հատկանիշներից՝ ներկայացրել ենք դրանց հետևյալ բնորոշումը. ոչ նյութական շահը որպես օբյեկտ ունեցող բացարձակ իրավունքներ, որոնք առաջանում են համապատասխան հանգամանքների իրավաբանական հաստատման արդյունքում և դադարում՝ օրենքով սահմանված կարգով և դեպքերում, որոնք ուղղված են առավել խոցելի խմբում գտնվող երեխաների բնականոն զարգացմանը և սոցիալականացմանը, իրականացվում են խնամակալների (հոգաբարձուների), խնամատար ծնողների գործողությունների նկատմամբ պետական անմիջական վերահսկողության ներքո:

4. Առաջնորդվելով Ընտանեկան օրենսգրքում ամրագրված կենսաբանական ընտանիքի հետ երեխայի վերամիավորման գաղափարով, ելնելով ՄԻԵԴ նախադեպային պրակտիկայի, միջազգային փորձի ուսումնասիրությունից՝ հանգել ենք այն հետևության, որ ԱԾԽՄԵ-ի կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորման առումով առանձնակի կարևորություն ունի երեխայի՝ ծնողների և այլ ազգականների հետ շփվելու իրավունքի ապահովումը, շփվելու իրավունքի իրացման ոչ իրավաչափ սահմանափակումների վերացումը: Ուստի, առաջարկում ենք խնամակալ (հոգաբարձու) նշանակելու մասին որոշման մեջ, խնամատարության պայմանագրում խնամարկյալի և ծնողների ու այլ ազգականների հետ շփման կարգն ու պայմանները սահմանելու իրավունք վերապահող, իսկ ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված խնամատարության պայմանագրի օրինակելի ձևում շփման կարգի և պայմանների վերաբերյալ համապատասխան դրույթներ լրացնել:

5. Վերլուծելով «երեխայի լավագույն շահ» և «երեխայի սուբյեկտիվ իրավունք» հասկացությունների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտված մոտեցումները, դրանց վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները և օրենսդրության զարգացման ներկայիս միտումները՝ կարող ենք փաստել, որ դրանք գտնվում են սերտ կապի մեջ, փոխպայմանավորված են մեկը մյուսով, իսկ «երեխայի լավագույն շահ» հասկացության սահմանումը և դրա բացահայտիչ հանդիսացող հանգամանքների սպառիչ ամրագրումն օրենքում իրատեսական չենք համարում: Յուրաքանչյուր իրավիճակում որոշում կայացնելիս «երեխայի լավագույն շահի» բացահայտիչ ընդհանուր հանգամանքների կողքին պետք է բացահայտվեն և գնահատվեն տվյալ երեխայի, օրինական ներկայացուցչի անձով պայմանավորված և իրավիճակից բխող տիպական հանգամանքները ընդհանուր համակցությամբ, իսկ երեխայի շահերի և այլոց իրավունքների միջև մրցակցության դեպքում պետք է հաստատվի երեխայի շահի գերակա-

յությունը:

6. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի», որպես պաշտպանության հատուկ սուբյեկտի իրավունքների պաշտպանության առանցքային խնդիրների ուսումնասիրությունից եկել ենք այն եզրահանգման, որ պաշտպանության այս կամ այն եղանակի կիրառման համար հենքային նշանակություն ունի կարգավիճակի ճանաչումը, որին արդեն հետևում է իրավունքների իրացմանը և պաշտպանությանը միտված գործողությունների երկար շղթա, այն պաշտպանության հիմնական եղանակ է, որից ածանցվում և իրացվում են այլ եղանակներ:

7. Երեխաների պաշտպանության գործող համակարգի, օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը թույլ է տալիս պաշտպանության ողջ շղթայի ընթացքում խնամակալության մարմնի կողմից կատարվող գործողությունները բաժանել երկու փուլի՝ երեխայի՝ «առանց ծնողական խնամքի մնացած երեխա» կարգավիճակում հայտնվելը կանխելուն, բացառելուն և «առանց ծնողական խնամքի մնացած երեխայի» կարգավիճակում հայտնվելուց հետո վերջինիս իրավունքների իրացմանն ու պաշտպանությանն ուղղված գործողություններ:

8. Քաղաքացիական օրենսգրքի 310-րդ հոդվածում ամրագրված իրավակարգավորումների պայմաններում բացառված չէ, որ ինչ-ինչ պատճառներով անձնական շահերով առաջնորդվելով՝ հոգաբարձուն, առանց իր համաձայնության, խնամարկյալի կնքած գործարքն անվավեր ճանաչելու պահանջ չներկայացնի դատարան: Խնամարկյալի, հոգեզավակի գույքային իրավունքների պաշտպանության տեսանկյունից նման դեպքերը հնարավորինս բացառելու համար պետք է այս հարցում ընդգծված դերակատարում վերապահել խնամակալության մարմնին: Ուստի, առաջարկել ենք Քաղաքացիական օրենսգրքի 310-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի կողմից առանց իր ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության կնքված գործարքն, այն դեպքերում, երբ նման համաձայնությունը պահանջվում է սույն օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, դատարանով կարող է անվավեր ճանաչվել ծնողների, որդեգրողների, հոգաբարձուի, խնամակալության և հոգաբարձության մարմնի հայցով:»:

9. Ելնելով երեխայի իրավունքների և շահերի իրացման ու պաշտպանության հարցերում խնամակալության մարմնին վերապահված իրավունքներից ու պարտականություններից, հստակ գործառույթներից, «երեխայի լավագույն շահերի» ապահովման հարցում վերջինիս իրավական շահագրգռվածությունից՝ գտնում ենք, որ օրենքում պետք է ամրագրել առանց խնամակալության մարմնի թույլտվության կնքված, երեխայի շահերին հակասող գործարքից վերջինիս շահերի պաշտպանության այնպիսի եղանակ, ինչպիսին կլինի վիճահարույց գործարքի անվավեր ճանաչումը և դրա անվավե-

ության հետևանքների կիրառումը: Այսպիսով, առաջարկում ենք, Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ, ինչպես նաև Քաղաքացիական օրենսգիրքը լրացնել նոր՝ 310.1-ին հոդվածով:

«Հոդված 39. Խնամարկյալի գույքը տնօրինելը

2. Առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվության՝ խնամակալն իրավունք չունի կնքել, իսկ հոգաբարձուն՝ համաձայնություն տալ կնքելու խնամարկյալի գույքի տնօրինման, ինչպես նաև խնամարկյալի գույքի նվազեցմանը հանգեցնող ցանկացած այլ գործարք կամ ցանկացած գործարք, որը փաստացի վատթարացնում է խնամարկյալի գույքային դրությունը:

«Հոդված 310[1]. Առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվության կնքված գործարքի անվավերությունը

Առանց սույն օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվության կնքված գործարքը դատարանով կարող է անվավեր ճանաչվել խնամակալության և հոգաբարձության մարմնի հայցով, բացառությամբ այն դեպքերի, երբ նման գործարքը կնքվել է ի շահ խնամարկյալի:»:

10. Օրենսդիրը, անձի՝ մշտական բնակության վայր չունենալը, ինչպես նաև սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին չհամապատասխանող բնակելի տարածություն ունենալը բացառող հանգամանք է դիտարկում միայն խնամատար ծնող դառնալու դեպքում, իսկ անչափահասի՝ խնամակալ (հոգաբարձու) դառնալու հարցում այս հանգամանքին որևէ իրավական նշանակություն չի տրվում: Ուստի, այս առումով ստեղծված անհավասար իրավիճակի վերացման և երեխայի լավագույն շահերի ապահովման նպատակով առաջարկում ենք Քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Անչափահասի խնամակալներ և հոգաբարձուներ չեն կարող նշանակվել այն անձինք, որոնք չունեն մշտական բնակության վայր, ինչպես նաև այնպիսի բնակելի տարածություն, որը համապատասխանում է սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին, եթե պետք է համատեղ բնակվեն խնամարկյալի հետ և խնամարկյալը չունի սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ սահմանված սանիտարական և տեխնիկական պահանջներին համապատասխանող բնակելի տարածություն:»:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1.«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կարգավիճակի սահմանումը որպես նրանց իրավունքների իրացման նախապայման» Երևանի պետական համալսարան, Իրավագիտության ֆակուլտետ, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, 280-296 էջեր:

2. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների անձնական ոչ գույքային և գույքային հարաբերությունների պատմական զարգացումը Հայաստանում (խնամակալություն և հոգաբարձություն, խնամատար ընտանիք)» Երևանի պետական համալսարան, Իրավագիտության ֆակուլտետ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2017 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2018, 208-233 էջեր:

3. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավական կարգավիճակի բնութագրական հատկանիշներն ըստ ՀՀ օրենսդրության», Պետություն և իրավունք, Երևան, 2018, Թիվ 2 (80), 40-54 էջեր:

4. «Խնամակալության և հոգաբարձության, խնամատարության ներքո գտնվող երեխայի՝ ծնողների և այլ ազգականների հետ շփվելու իրավունքը», Պետություն և իրավունք, Երևան, Թիվ 2-3 (84-85), 2019, 89-100 էջեր:

5. «Առանց ծնողական խնամքի մնացած երեխայի՝ սեփական կարծիքն արտահայտելու իրավունքի որոշ հարցեր», Օրինականություն, ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, 2019թ., N 113, 27-35 էջեր:

6. «Խնամակալությունը և հոգաբարձությունը, խնամատար ընտանիքը որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպմանն ուղղված ինստիտուտներ (իրավահամեմատական վերլուծություն)», Դատական իշխանություն, 1-2 (247-248) 2020, 57-74 էջեր:

7. «Խնամակալության և հոգաբարձության, խնամատարության ներքո գտնվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակելի տարածության իրավունքի իրացման խնդիրները ՀՀ-ում», Պետություն և իրավունք, Երևան, Թիվ 1 (89), 2021, 11-22 էջեր:

РУБИНА ВАРДАНОВНА ПЕТРОСЯН

ОСУЩЕСТВЛЕНИЕ ЛИЧНЫХ НЕИМУЩЕСТВЕННЫХ И ИМУЩЕСТВЕННЫХ ПРАВ ДЕТЕЙ, ОСТАВШИХСЯ БЕЗ ПОПЕЧЕНИЯ РОДИТЕЛЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Резюме

Системные изменения, произошедшие в 21 веке, оказали свое влияние также на семейные отношения, в том числе на организацию ухода и воспитания детей, оставшихся без попечения родителей, на осуществления их прав. Это обусловлено тем, что в настоящее время существенно изменился правовой статус ребенка, характер и содержание правоотношений между ребенком и субъектами, ответственными за его уход и воспитание. Конституцией РА (с изменениями 2015 года) закреплено, что дети, оставшиеся без родительского попечения, находятся под опекой и защитой государства, что и подчеркивает особый подход государства и основные направления государственной политики в данной сфере по отношению к ним.

В 2017 году были проведены масштабные и стержневые изменения в разделе Семейного кодекса РА о детях, оставшихся без попечения родителей. В частности, в главе о приемной семье были внесены институциональные изменения: виды приемных семей, основания и длительность помещения ребенка в приемную семью, были уточнены требования, предъявляемые к приемной семье, были расширены условия предусматривающиеся в договоре о попечительстве и т.д. Между тем, не были осуществлены соответствующие изменения в иной, направленной на организацию ухода и воспитания детей, оставшихся без попечения родителей - главе об опеке и попечительстве. В этом контексте первостепенным и актуальным является всестороннее изучение надлежащего обеспечения ухода и воспитания детей, оставшихся без попечения родителей, посредством институтов опеки, попечительства и приемной семьи, существующих правовых регулирований об осуществлении их личных неимущественных и имущественных прав, проблем их практического применения и предложение решений.

В то же время, имеющиеся статистические данные аргументируют, что

несмотря на обстоятельство того, что модель ныне действующей приемной семьи в зависимости от физических и душевных особенностей ребенка предусматривает виды приемной семьи и дифференцированные сроки осуществления попечительства в отличии от опеки и попечительства, которая осуществляется бесплатно, в случае приемной семьи ежемесячно выплачиваются денежные средства, тем не менее в сравнении с институтом опеки и попечительства имеет меньшее применение. Все это обусловливает необходимость изучения проблем, связанных с практическим применением вышеуказанных видов семейного ухода и воспитания.

Научная новизна диссертации заключается в том, что данная работа является первым комплексным исследованием, в котором рассматривается ряд теоретических и практических вопросов, связанных с реализацией личных неимущественных и имущественных прав детей, оставшихся без попечения родителей. В рамках работы были изучены основания возниковения, характерные черты, содержание правового положения детей, оставшихся без попечения родителей, общий состав, содержание, особенности реализации личных неимущественных и имущественных прав, существующие системы защиты прав.

Изучены и выявлены проблемы, возникающие в ходе деятельности органов опеки и попечительства, занимающие ключевую роль и функции в вопросах реализации прав и защиты детей, оставшихся без попечения родителей, и пробелы правового регулирования.

Диссертация имеет как теоретическую, так и практическую ценность, поскольку в результате исследования был выявлен ряд предложений по совершенствованию законодательства, который может быть использован в законотворческой деятельности.

Основные положения диссертации отражены в научных статьях, опубликованных автором, а также были представлены в ходе многочисленных конференций.

RUBINA VARDAN PETROSYAN

EXERCISE OF PERSONAL NON-PROPERTY AND PROPERTY RIGHTS OF CHILDREN LEFT WITHOUT PARENTAL CARE IN THE REPUBLIC OF ARMENIA

Summary

The systemic changes that took place in the 21st century have also influenced family relations, including the organization of care and upbringing of children left without parental care, and the exercise of their rights. This is due to the fact that at present the legal status of the child, the nature and content of legal relations between the child and the subjects are responsible for his care and the upbringing has changed significantly. The RA Constitution (amended in 2015) stipulates that children left without parental care are under the care and protection of the state, which emphasizes the special approach of the state and the main directions of state policy in this area in relation with them.

In 2017, large-scale and pivotal changes were made to the section of the RA Family Code on children left without parental care. In particular, in the chapter on the foster family, institutional changes were made: the types of foster families, the grounds and duration of the placement of the child in the foster family, the requirements for the foster family were clarified, the conditions provided for in the guardianship agreement were expanded, etc. Meanwhile, the corresponding changes were not implemented in another chapter on guardianship and guardianship, aimed at organizing the care and upbringing of children left without parental care. In this context, a comprehensive study of the proper provision of care and upbringing of children left without parental care through the institutions of guardianship, guardianship and foster family, existing legal regulations on the exercise of their personal non-property and property rights, problems of their practical application and proposal of solutions is paramount and relevant.

At the same time, the available statistical data argue that despite the fact that the model of the current foster family, depending on the physical and mental characteristics of the child, provides for the types of foster families and differentiated terms for the implementation of guardianship, in contrast to guardianship and guardianship, which is carried out free of charge, in the case

of a foster family, money is paid monthly, however, in comparison with the institution of guardianship and trusteeship, it has less application. All this makes it necessary to study the problems associated with the practical application of the above mentioned family types care and upbringing.

The scientific novelty of the dissertation lies in the fact that this work is the first comprehensive study that examines a number of theoretical and practical issues related to the implementation of personal non-property and property rights of children left without parental care. As part of the work, the foundations of the emergence, characteristic features, the content of the legal status of children left without parental care, the general composition, content, features of the implementation of personal non-property and property rights, the existing systems of protection of rights were studied.

Studied and identified the problems arising in the course of the activities of the guardianship and guardianship authorities, which play a key role and functions in the implementation of the rights and protection of children left without parental care, and gaps in legal regulation.

The dissertation has both theoretical and practical value, since as a result of the study, a number of proposals for improving legislation were identified, which can be used in lawmaking.

The main provisions of the dissertation are reflected in the scientific articles published by the author, and were also presented at numerous conferences.